

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԹԱԹ ԱԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54<sup>րդ</sup> ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 31

31 ՅՈՒՆԻՍ 1904

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրուան մահերը. — Հրասարակչական գործը մեր մեջ. Տ.Ա. — Անոնք չեն բռնվիր (Բանաստեղծութիւն) ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ. — Ժօրժ Սան (Իր հարիւրամեակին առթիւ) ՍԴԷԼԼԱ. — Աղջկան մը օրագրէն Բաղօւած. ՄԱՌԻ ՅՈՎ ՀԱՆՆԷՍԵԱՆ. — Քեզի՛ համար (Սիրերգ) Փ. — Սիւլանա (Գ. Է. վերջին մաս) ՍԷՆՔԻԷՎԻԶ. Բարգմ. ՍԱՐՈՐԴԻ. — Խմբագրական Նօ. — Զանգանք. Գրական Գործիչներ. — Զանգանք. Գրական Գործիչներ. — Զանգանք. Գրական Գործիչներ.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի սարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բանաստեղծութիւն, Գրական Գործիչներ, Զանգանք. Գրական Գործիչներ. — Արտասահման՝ 12 Գրանգ. կամ 5 րուպի: Թղթասարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւնը չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ անսոյ: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները ճկատողութեան չեն առնուի: Զի հրասարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

### ԶԵՆՈՒՄ ԿՐԹԱՌԻԻ ՀԱՏԷ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Rédaction de la Revue MASSIS

Կ. Պոլիս, Ղալաթիա

Galata, Constantinople

# LA CONFIANCE



## Լ Ա Ք Օ Ն Ֆ Ի Ա Ն Ս

### Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

#### Հ Ր Դ Ե Հ Ի Դ Է Ս

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանսո. կա-  
նաւարութեան ֆոնդորիւմ ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին հա-  
ար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապա-  
հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոյ  
ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գոր-  
ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց  
ու վստահելիութեան վրայ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հան-  
րածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարի-  
զի՝ Օրէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ  
Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ  
տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Իրիմալիոնը, Բրէնթանի, Պէլ-ժառահիւնի,  
Օթէլ արքայի եւ Սամարիթէնի մեծ վաճառատոցները, Կոնստանտնուպոլիսի թատրոնները,  
Թրանսաթիւանթիք, Հավր-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց,  
Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին  
վրայ իր պատուաւորութեամբ ծանօթ:

#### Գ Ա Ռ Ն Ի Կ Ա Ճ Ա Ռ Ե Ա Ն

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց  
համար, Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes միջախի  
ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէոյիւք Երլազ խան, Թիւ 14, Լա Գօնֆիոնս  
ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր սնանկան սեփականութիւնը եղող անբիւֆալ  
վաճառատուն մը, Եւսկայ Սահաֆլար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յոնձնա-  
արութիւններ կ'ընդունուին:

# Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

## ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

|                                  |                |     |
|----------------------------------|----------------|-----|
| Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք | 274,000,000    | Փր. |
| 1902ին գանձուած ապահովագին       | 24,000,000     | »   |
| Դրամագլուխ երաշխաւորեալ          | 119,000,000    | »   |
| Ապահովագրեալ դրամագլուխ          | 21,500,000,000 | »   |

## ԿԵՆԱՑ ԶԻՒՂ

|                                  |             |     |
|----------------------------------|-------------|-----|
| Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք | 129,000,000 | Փր. |
| Ընթացիկ ապահովագրութիւնք         | 272,000,000 | »   |
| Դրամագլուխ եւ պահեստք            | 158,000,000 | »   |
| 1092ին գանձուած ապահովագին       | 12,000,000  | »   |

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»-ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐԷ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ-ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Եւհարածիւններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսաբաւութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ ջանաբաշխներու բարոյման (accumulation des bénéfices) ՅՈՒՌԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլս, Սուլթան Համալ, Բասաժ Բաքրեք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Խալաթի, Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

3-10



## ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ (ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպոստոսան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիլ, քիւ 16

Զբոսանեան արաւոքման

Պալպալեան ամէն օր ահուայի ամէն տե. օակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, կիրակի եւ Նրեք. շաբթի մինչեւ ժամը 5, Դիւնուան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե. բոլորաւորէ իր լեցուցած ու յինած ահու. ներք: Ճորձիկները ահուայ քաշել տալու հա. մար որոշ վարձք մը չկայ: քաշել տուողին եւ ժէն կ'ախեալ է: Վ'ոյեալ տառմն արու. ժուհի Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն Դարձանաւ մէջ: Աղագներուն ձրի 3-10

## ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎՐԱՐՈՅԺ—ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Վ Կ Ա Յ Ե Ա Լ

ԼԻՈՆԻ ԱՏԱՄՆԱՐՈՒԺԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

ԵՒ

ՊԱՇԵՒԻ ԺԵՆԵՎԻ ՐՈՇԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

Կը բուժէ ահուայի ամէն տեսակ ցաւեր եւ լինտերու հիւանդութիւններ, կտտորելա. դորձեալ սիսթէմներով, Հիւանդ կ'ընդունի ամէն օր, Բերա, Մեծ Փողոց ԳՐԷՏԻ ԼԻՕ. Նէլի ղրմացը կ'ազանի փողոց Թիւ 2:

Երեքը-ըթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ ցորեկ աղքատաց ահուայ քաշելը ձրի է:

3-10

## ԺԻՒՐԱԿԱՆ ԱԽՏԻ ԳԷՄՆԻՆԵՆԵՐԻ ՆԱԽԱԶՐՈՒԳՈՒԹԻՈՒՆ

Ծիրակաւն ախտի դէմ նախազգուշութեան միայն ճամբայ մը կայ, այն է մարմինը մշտնապէս կենսական զօրութեամբ պահելը որնորդ զբութեան կենսական զօրութիւնն, առողջութիւնն և զինացողան որդ տալով կրնայ ըլլալ:



## SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ ամենալաւ "ուտելիք" է, որ շուտով առողջութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր հարուստ արիւն կը տարածէ:

Եթէ կազմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և բարակացւի առաջին նշանները երևան կ'ելլեն, ինչպէս տեղական գունատութիւն, թեթեւ սակայն թեթալար հագ, գիշերները անտեղեկ լարեխառնութիւն և անորժակի կորուստ ևն, ժամանակ վատնելու, չէ, մէկէն Ըսգօթի Բաղադրութիւնն առնելու է, միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և զօրութեան վերականգնէ և այս եղբայրութիւնը զործնականապէս կը տեսնուի վասնզի հաղարաւորներ տեսածն են և կը տեսնեն:

## ԸՍՊՈԹԻ ԲԵՂԵԳՐՈՒԹԻՈՒՆ

կատարեալպէս անուշամբ է, անորժակը կենդանացունէ, և մարտոգութիւնը կ'աճապարէ, Հիւանդութեան սերմը կը մոռցնէ և շուտով մարմինը կը զաւաթէ, Ըսգօթի Բաղադրութիւնը ընդմիջող այս տեսնուած նշանով վաղապէս փութելի մը մէջ կը դառնուի:

Շիշերու վրայն առ ուշադրութիւն ընել պէտք է:

## ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԿԵՆ. Բ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինադատանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած բարձր, հոսանքս եւ առողջարար թէյերէն, որոնք ամբողջ եղանակին յարմարագոյն ըմպելին են:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիլին:

Կ. Պոլիս, Պահէ Գափու, ձէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ Գլխաւոր քաղաքներուն մէջ նոյնպէս կ'ապրուի:



## ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

## ՔԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

### ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, ածան ու ճաշակաւոր, թէ արեւելեան եւ թէ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գուլազաններ եւ այլն, դիմեցէք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց թիւ 13:

Հարելին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարելին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ չլաւանդուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ պատեկ գոհարներէն 100ին 15 զեղչով:

# ՄԱՍԻՆ

54<sup>ր</sup> ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 31

31 ՅՈՒՆԻՍ 1904

## ՕՐՈՒԱՆ ՄԱՆԵՐԸ

### ՏԻԳՐԱՆ ՓԱՇՍ.

Օրաթերթերը գուժեցին Տիգրան փաշայի մահը, Բարիզեան թերթերէն առնելով որոնք գնահատական տողեր նուիրած էին հանգուցելոյն յիշատակին: Տիգրան փաշա մեռեր է էփլանի մէջ (Զուլիցերիա) ուր գացած էր օդափոխութեան համար: Այս անակնկալ ու ցաւալի կորուստը խորին ցաւ պատճառած ըլլալու է մասնաւորապէս Եգիպտոսի մէջ ուր հանգուցեալը յարգուած դէմք մըն էր ո՛չ միայն Հայերուն, այլև բնիկ տարրին ու եւրոպական գաղթականութեանց համար:

Տիգրան փաշա 57 տարեկան էր, առողջ մարմնով ու դերազագայէս զարգացած մշտքի տէր: Ֆրանսերէնը կը խօսէր ու կը գրէր Ֆրանսացիի մը պէս ու անգլիերէնը՝ Անգլիացիի մը պէս: Զուտ եւրոպական դաստիարակութիւն մը ստացած ըլլալով, զրեթէ անտեղեակ էր մայրենի լեզուին, բայց ասիկայ պատճառ մը չէր որ չի հետաքրքրուէր: Առաջնորդարանի գործերուն և հոգածու չըլլար Գահիրէի ազգ. վարժարանին ու եկեղեցիին: Տարիներէ ի վեր կը վարէր Գաւառ. ժողովին ատենապետութիւնը, և այս անգամ ալ Եգիպտոսացիները իր վերադարձին կըստատէին առաջնորդական ընտրութիւն կատարելու համար, երբ իր մահուան գոյժը կ'առնէն: Ուղղամիտ, լրջխոհ և ազնուաբարոյ անձնաւորութիւն մըն էր Տիգրան փաշա որ, զինքը տեսնողին պատկառանք կ'աղդէր: Բնաւորութեամբ զիւրահաղորդ չէր և իր բարեկամներուն չըջանալը, Գահիրէի մէջ, շատ սեղմ էր. այնպէս որ, նոյն իսկ Առաջնորդարանի գործերուն համար, հազիւ քանի

մը ծանօթ ժողովականներ, զիրքի տէր անձինք, կ'այցելէին իրեն՝ երբ հարկ ըլլար իր կարծիքն առնել: Եգիպտացի երեւելիներուն ու եւրոպական գաղութներու բարձր դասակարգին հետ մտերմական յարաբերութիւններ ունէր, օժտուած ըլլալով ընկերային յատկութիւններով:

Իր ձիրքերը մասնաւորապէս գնահատուած էին Եգիպտոսի հետ գործ ունեցող Անգլիացիներէն ու Ֆրանսացիներէն, և Կայս. Կառավարութիւնն ալ բարեհաճած էր զինքը պատուել աստիճաններով և պատուանշաններով:

Տիգրան փաշա բնիկ Իզմիրցի էր և կը պատկանէր Ապրօ ընտանիքին: Իր դաստիարակութիւնը Ֆրանսայի մէջ ստացած ու յետոյ Եգիպտոս վերադարձած, երկտասարդ հասակէն զիւրանագիտական ասպարէզն ընդգրկեց և իր արժանիքովը ու միեւնոյն ժամանակ պաշտպանութեամբ նուազար փաշայի, որուն փեսան էր, արագ յառաջդիմութիւն ունեցաւ և կոչուեցաւ արտաքին գործոց նախարարի կարեւոր պաշտօնին գոր վարեց ժամանակ մը: Աւելի քան տասը տարիէ ի վեր անպաշտօն կը մնար, բայց միշտ պահելով իր զիրքն ու անունը: Զմեռները կը բնակէր Գահիրէ որուն լաւագոյն պողոտաներէն մէկուն վրայ չքեղ ապարանք մը ունէր, և ամառները կերթար Եւրոպայի օդաստուն վայրերը, օդափոխութեան համար:

Տիգրան փաշա այրի էր և կը թողու երկու դեռատի զաւակ, մահչ մը և աղջիկ մը որոնց խնամեալ դաստիարակութիւն մը տալու նուիրած էր ինքզինքը:

Տիգրան փաշա իր վայելած բարձր դիրքին ու ազդեցութեանը շնորհիւ՝ մեծ հոգա-

ծութիւնն ունեցած է իր պաշտպանութեան ու միջամտութեան դիմողներուն, գործ և զբաղում հայթայթելով անոնց, և ղանաղան առիթներով Գահիրէի մէջ տրուած բարեգործական հանդէսներուն նախագահած է՝ կրթական ու աղքատախնամ գործին ի նպաստ:

\* \*

#### ՄԱՐՏԻՐՈՍ Կ. ԹՕՔԱՏԵԱՆ

Շաբթուս սկիզբը ցաւալի լուր մըն ալ հասաւ Մանչէսթրէն, գումելով մահը Մարտիրոս էֆ. Թօքատեանի՝ մեծահարուստ ու բարեգործ վաճառականին: Հանգուցեալը երէց եղբայրն էր Տիգրան և Յովսէփ էֆ. ներու և պետը Թօքատեան առեւտրական տան: Եթանասունըվեց տարեկան էր, Կ. Պոլսոյ մէջ ծնած և երիտասարդ հասակին Մանչէսթր ուղեւորած ուր խնայասիրութեամբ, ինքնօգնութեամբ և ուշիմ աշխատութեամբ յառաջ դիմեց առեւտրական ասպարէզին մէջ զոր ընդգրկած էր իբրեւ հաշուակալ և զլիւսաւոր պաշտօնեայ հայ վաճառատան մը: Բիչ ետքը, գործակցեցաւ Կ. Պոլսոյ իր երկու եղբայրներուն հետ և հիմնեցին առեւտրական ու սեղանաւորական տուն մը որ իմաստուն ղեկավարութեան մը շնորհիւ յարաճուն զարգացում և ընդարձակ գործառնութիւններ ունեցաւ, որոնք պատուաւորապէս կը շարունակուին Մանչէսթրի և Կ. Պոլսոյ մէջ:

Մարտիրոս էֆ. Թօքատեան բարեգործութիւնը կ'ըմբռնէր գործնական կերպով, և զինքը մօտէն ճանչցողները կը պատմեն թէ ուսանողներու, կարօտեալներու նպաստելէ զատ, մասնաւորապէս օգնութեան ձեռք կարկառած է նիւթական ձախորդութեան մէջ եղող վաճառականներու, վերահաստատելով անոնց վարկը: Հանրային նպաստի գործերու մէջ ալ ժլատ չէր և Մանչէսթրի եկեղեցին որուն Հոգաբարձու եղած է հանգուցեալը երկար տարիներ, միշտ օգտուած է իր բարեպաշտական նուէրներէն: Նպաստից յանձնաժողովոյ վերջին նիստին մէջ, որ չորեքշաբթի օրը գումարուեցաւ Ղալաթիա, յիշուեցաւ թէ Մարտիրոս էֆ. չէր զլացած իր աջակցութիւնը ընծայել կարօտելոց հոգա-

ծութեան գործին մէջ և թէ փափագ ունէր տեւական օգնութիւն մը սահմանել կրթական-բարեգործական նպատակի մը համար, ինչպէս որ այս մասին Ս. Պատրիարք Հօր տեղեկութիւն հաղորդուած էր առաջուրէ: Յանձնաժողովը իր վշտակցութիւնը յայտնեց Թօքատեան էֆ. ի մահուան առթիւ և որոշեց ցաւակցական գիր մը ուղղել հանգուցելոյն եղբայրներուն, միեւնոյն ժամտնակ յայտնելով իր ակնկալութիւնը թէ պիտի յօժարին իրագործել հանգուցելոյն փափագը:

Մարտիրոս էֆ. Թօքատեանի հարստութիւնը, օրաթերթերու խօսքին նայելով, կը հասնի 200,000 անգլ. ոսկիի: Այս մեծահարուստ անձը ամուրի էր. գործի զբաղումներէն դուրս, իր նախասիրած ժամանցն էր, կըսեն, ընթերցանութիւնը. մայրենի լեզուէն զատ՝ հմուտ էր անգլիէրէնի ու գերմաներէնի:

Թօքատեան ընտանիքին փափագին համաձայն, հեռագրուած է Մանչէսթր որպէսզի հանգուցելոյն մարմինը զոսուի Պոլիս բերուելու և ընտանեկան դամբարանին մէջ ամփոփուելու համար: Տիգրան էֆ. Թօքատեան չորեքշաբթի օրը Մանչէսթր ուղեւորեցաւ իր հանգուցեալ եղբոր մարմինը Կ. Պոլիս փոխադրել տալու համար:

#### ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸ

ՄԵՐ ՄԷՁ

Հակառակ մեր լրագրութեան մէջ ատեն ատեն կրկնուող դանդաւան,—թէ օգտակարութեան ու շահեկանութեան տեսակէտներով փնտռուելիք հատորներ լոյս չեն տեսներ և թէ հրատարակչական գործը զասագիրքերու տպագրութեան մէջ կը սահմանափակուի,—թողունք վերջին տարիները, նոյն իսկ վերջին ատեններս գրեթէ չաբաթ չանցնիր որ հատորի մը երեւումը կամ բանասիրական երկասիրութիւն մը մամուլին յանձնուած ըլլալը ծանուցանելու առիթը չունենանք: Այսպէս, նորագոյնները միայն յիշելու համար,

Մուշեղ վարդապետի Գրուպօները և Ռ. Յ. Պէրպէրեանի Խոնք եւ Յոյժը՝ որոնց վրայ առանձին յօդուածներով խօսած ենք այս էջերուն մէջ, Սիմօն Գափամաճեանի Նոր Բառգիրքը, որուն պրակները լոյս կը տեսնեն կանոնաւորապէս, Դաւթեանի Նուէր հայ մանուկներուն հատորիկը, փունջ մը դողարիկ ոտանաւորներու, և ուրիշ մէկ-երկու գրքոյկներ որոնց մէջ վէպ մըն ալ կայ, անակնկալօրէն յաջորդեցին իրարու։ Բնականաբար, ասոնց ամէնքը մէկ գծի վրայ չենք կրնար դասել ու հաւասար գնահատումի մը առարկայ դարձնել։ Բայց իւրաքանչիւրը ունի իր քիչ կամ շատ արժանիքը, և եթէ տկար, անխնամ գրութեանքներ կը գտնուին անոնց մէջ, լուրջ ու գեղեցիկ գործեր ալ կան, զորս աւելորդ է չեշտելը, և բոլորը մէկանց ցոյց կուտան հրատարակչական գործին կարծուածին չափ լքուած չըլլալը, ինչ որ գրական տեսակէտով սրտապնդող երեւոյթ մըն է։

Այս երեւոյթը աւելի ուշագրաւ կը դառնայ խնամատ և ընդարձակ երկասիրութեան մը հրատարակութեամբ, ճառակ նոր Գրականութեան որուն ձեռնարկած է Սմբատ Դաւթեան՝ առանց միւս կողմէ լքանելու իր Թատերական պատմութիւնը որ պիտի ընդգրկէ բնական կեանքի սկզբնաւորութենէն մինչև մեր օրերու շրջանը, հին ու նոր, մեռած ու ողջ արուեստագէտներուն կենսագրութեամբը, պատկերներովը և այլն։ Իր ձեռքով, որուն առաջին ութը պրակները տրւապարտած են արդէն, հիմնովին կը տարբերի մեր մինչև ցարդ տեսած «Ճաշակ»ներու ծրագրէն և ուղղութենէն, և պիտի բովանդակէ նոր գրականութեան լաւագոյն նմոյշները՝ մաքուր աշխարհաբարով մը զոր միօրինակ դարձնելու համար մանր-մունր retoucheներ ընելէ չէ քաշուած հրատարակիչը։ «Չատուած կտորներու ընտրութեան միջոցին, — կը գրէ Դաւթեան իր նախաբանին մէջ, — չնայեցանք միայն անունին, չնայեցանք ոտորագրութեան համբաւին ինչ աստիճանի ըլլալուն, երբ նիւթը նոր, գործուածքը գեղեցիկ ու գաղափարը օգտակար և ուժեղ ըլլալուն առաջին կենսական յատ-

կութիւնները ունէին։ Այսպէսով ունեցանք հատուածներ որոնց հեղինակները մեզի իսկ անձանօթ են»։ — Որով ըսել կուզէ թէ զերծ մնացած է «անունի հմայք»ին նախապաշարութենէ, թէ և է՛ն ծանօթ գլագէտներու, բանասէրներու և լանստեղծներու արտագրութիւններն ու անունները պիտի երեւան իր գրքին մէջ. բայց, անոնց քով ալ, նորերը, թարմերը, հալիւ ծանօթացուած։

Գործին զլխաւոր բաժանումներն են, — Նկարագրական, ընկերային նիւթեր, իմաստասիրութիւն, բանաստեղծութիւն, կենսագրութիւն, աղագրութիւն եւ անխուսափելի... «կրօնային նիւթեր»ը։ Որչափ որ կարելի էր գաղափար կազմել հրատարակուած հարիւրէ աւելի էջերէն, ընտրութիւնն ու դասակարգութիւնը շատ լաւ կատարուած են և կը համապատասխանեն ֆրանսերէն լաւագոյն Morceaux choisis մը ծրագրին, որ հաւասար ախորժով կրնայ կարգացուիլ փոքրերէն ու մեծերէն, դպրոցականներէն ու չափահասներէն։ Գրողներու ամբողջ սերունդի մը արտագրութեանց ցուցագրութիւնն է անիկայ որ նոյնքան տեղ կուտայ հիներուն որքան նորերուն և որուն իւրաքանչիւր էջը, ըլլայ քսան տարուան գրութեան մը կամ երէկուան, ունի միշտ հրապոյր մը, — կամ գրքի մը ծալքերուն մէջ պահուած ծաղիկին և կամ թաղարէն նոր փրցուած ծաղիկին հրապոյրը, — որոնց մէկը իր յիշատակներովը ու միւսը իր թարմութեամբը կը մղեն իրարու դէմ... գեղեցկութեան մրցումը։

Տ. Ա.

ՍՏԱՅՍՆՔ Տ. Վահրժ Վրդ. Շահլամեանի հրատարակած մէկ գրքոյկը, Կրօնական Ուսումն, նախակրթարանի տարրական դասընթացքի յատուկ դասատետր մը, Յ. Մատթէոսեան տպագրութեամբ։ Վաճառման կեդրոնատեղին է Պալենց Դրատունը։ — Դին 2 ՂՂ։

## ՔՅՔԾ ԶԱՄԱՐ

Տիեզերքին մեծութեան մէջ անսահման,  
Մտքիս հսկայ նայուածքը միշտ կուգայ ման,  
Եւ եռանդով մը անլուր  
Կը պրպըտէ անոր մասերն անհամար,  
Գտնելու բան մը արժանի քեզ համար:  
Պաշտեցեալս, բայց ի զ՛նք:

Լոյսերը կան արեւներուն մեծափառ  
Շօղերը կան լուսնակներուն—անբարբառ  
Սիրերգներ մեղմ ու տըկար—  
Կայծերը կան երկնից մըթին կամարին  
Որք գիշերը մեզմէ հեռու կը փայլին:  
Բայց ի՞նչ ընեմ, չե՞ն ըզգար:

Միջոցը կայ անծայրածիր, ահագին,  
Անջրպէտը աշխարհներու ծաւալին,  
Խոր միջոցը անհունին,  
Արեւներու յորդ լոյսերէն ալ անդին  
Խաւարը կայ քառսին՝ մեծ արգանդին,  
Բայց տարտամ են, գոյն չունին:

Կապոյտը կայ հրապուրող եթերին,  
Դլխուս վերեւ կապոյտը ջինջ ու լռին  
Բայց հորիզոն ունի ան:  
Ուկէտանին կապոյտը կայ ծփծփուն,  
Բայց անոր ալ փրփրադէզ յոգներուն՝  
Եզերքները կան սահման:

Լախածաւալ միջոցին մէջ դաշտերուն,  
Չիւնի մաքուր խաւերը կան փալփուռ,  
—Ճերմակ ընծան երկնքին—  
Կապոյտին մէջ ամպիկները ճեպ ճերմակ,  
Բնքոյլ սիրուն հոգի ամպերը համակ.  
Բայց անոնք ալ կը հալին:

Գոյները կան ծիածանի կամարին,  
Բայց հազիւ թէ ծնած կ'անցնին, կը մարին.  
Փայլակ մըն է կեանքերնին:  
Ծաղիկները կան այլազան, գոյնզգոյն  
Անձայն անկեղծ խօսակիցներ մեր հոգւոյն,  
Բայց որքա՞ն չուտ կը թողնին:

Այսպէս ի զ՛նք կը դառնամ շուրջն աշխարհի  
Կը պրպըտեմ տիեզերքը վիթխարի,

Այդ ամէնուն մէջ հոգիս,  
Չկայ բան մը որ արժանի ըլլայ քեզ  
Եւ տաղտկացած այս անօգուտ փնտուռէս,  
Ալ կը դառնամ ինքզինքիս:

Եւ վերջապէս ինքիր «ես»իս կը կառչիմ,  
«Ես»իս փոքրիկ, մահկանացու ու ճղճիմ,  
Որովհետեւ անոր մէջ,  
Տիեզերքէն, մեծ միջոցէն անյատակ  
Ջինջ կայծ մը կայ, կայծ մ'արեւէն ալ յատակ  
—Բեզի համար սէրս անշէ՛ջ...  
Փ.

## ԺՕՐԺ ՍԱՆ

(ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՄԱՍ)

Իր հռչակի գազաթնակէտին վրայ էր  
ԺօռԺ Սան, երբ Պիւլօ, Ռըվիւ ԵՏ Տեօ Մօնի  
Տնօրէնը, որուն քանի՜ անգամներ յայտնած  
էր իր հիացումը Միւսէի բանաստեղծութիւն.  
Ներուն համար, մտադրեց ճաշի մը մէջ իրա-  
րու դէմ հանել Էնսիւսմաի հւ Ռօլաի փառա-  
պանծ հեղինակները: 1833ի մարտին, ԺօռԺ  
Սան կամաւոր կերպով խոյս տուած էր Միւ-  
սէն ճանչնալու առիթէն: Սան կը գրէր Սէնթ  
Պէօվի, —Իր գրական խորհրդականը որ մտե-  
րիմը եղած էր, —Թէ չէր բաղձար ընդունիլ  
Միւսէն, զոր շատ պէրող (dandy) կը գտնէր  
եւ զոր ճանչնալուն մէջ աւելի հետաքրքրու-  
թիւն կրնար ունենալ քան իրական շահ:  
Սակայն, հանդիպեցան իրարու, խօսեցան,  
գաղափարի եւ ներշնչումներու փոխանակու-  
թիւններ ունեցան: Առանց դժուարութեան,  
իրենց հանձարներուն միջև համակրութիւն  
մը գոյացաւ: Միւսէ հազիւ քսան տարեկան  
կար: Սան եօթը տարու մեծ էր անկէ, եւ  
տարիքի այս տարբերութիւնը, որ, ետքէն,  
իրենց վէճին պատճառներէն մէկը եղաւ,  
առաջին ղդացումի մը հրապոյրին՝ աւելցուց  
տեսակ մը քաղցրութիւն եւ մօրենական  
չեչտ մը:

Եօթը չաբաթ ետքը, Միւսէ կ'ընկերանար Սանի՝ իր Խաւիա ճամբորդութեան, ներքին քարտուղարի հանգա Լանքով: Այդ տոնէն կը սկսի այն աղմկալի բարեկամութիւնը, որ իրենցմէ իւրաքանչիւրին ներշնչեց մէկ քանին իրենց ամէնէն վսեմ աղաղակներուն, մէկ քանին իրենց ամէնէն ցնցող եւ ամէնէն մեղամաղճոտ յղացումներուն, եւ որ ծնունդ տուաւ շատ մը մեկնութիւններու եւ հրատարակութիւններու: Դեռ մօտեքս, Պրիւսէի մէջ լոյս կը տեսնէր Սանի եւ Միւսէի միջեւ փոխանակուած թղթակցութեան ամբողջութիւնը, վճռական հրատարակութիւնը, ուրկէ կը ցայտի այդ խնդիրին քողամերկ ու անտարալու սեւի ամբողջ լոյսը: Չպիտի մտնենք մանրամասնութեանը մէջ այդ եօթանասուն տարուան զգացումի տազնապին, բացառութիւն կաղմող երկու էակներու միջեւ, — որ հիւանդադին կերպով բարձր տազնապի մը հասած է լեզուներու տենդոտ մթնոլորտին մէջ, անձնատուր՝ անդիմադրելի ներշնչումներու ամէնէն կրակ ու բոց խանդին, եւ որ իր հակահարուածովը ցնորեցուցած է այնչափ միտքեր:

Ժօռթ Սանի հոգին կը ցնցուէր տակաւին, երբ, տարիներ ետքը, կ'ապրէր ու կախատէր Նօհանի իր առանձնարանին մէջ, ա'լ զգաստացած:

\* \*

Տակաւին վերջնական հանդարտութեան եւ բարոյական կատարեալ խաղաղութեան ժամանակը չէր, երբ Լէլիա դարձաւ հեռավոր յուզումներու ուրուականը, եւ իրեն յաջորդեց «Նօհանի բարի տիկինը», հանդարտաբարոյ, մաղբը ճերմկած, մամիկի մը ժպիտը ունենալով դէմքին վրայ, որ իրիկուան սեղանին առջեւ կ'անցնէր, բայսեց բանալու համար:

Ասիկա «Նօհանի առաջին ժամանակաշրջանը» եղաւ, ինչպէս մկրտած է զայն Ժիւլ Լըվալլուա: Ժօռթ եկած էր նստիլ իր մեծ մօրը կողմէ տնկուած ծառերուն տակ, առանց գիտնալու թէ ո'րչափ ժամանակ պիտի մնար հոն. եւ հոն իր բարեկամներուն եւ Պէրիի հայրենակիցներուն մէջ գտնելու համար

քիչ մը սփոփանք: Բոլորն ալ ծանօթ են իրենց անուն երով, դրացի այդ սիրական ընկերները, որոնք 1834էն 1839, կը հաւաքուէին իր շուրջը. մօտիկ ընելու իր աւերաբնէրը, իր մեղամաղճոտ խօսքերը, մասնակցելով իր բռնազրօսիկ ուրախութիւններուն, կամ պարզապէս խօսելով անոր հետ օրուան խնդիրներու եւ սիրելի երկրին գեղեցկութիւններուն վրայ: Շահեկան եւ հետաքրքրաշարժ դէմքեր, որոնք իր շնորհիւ ապագայ սերունդներու կարգը անցած են, Նօհանի ոսկեգրքին թերթերուն մէջ: Ո'րչափ ալ քիչ թղթատած ըլլայ մարդ իր թղթակցութիւնը, դարձեալ հոն կը գտնէ անդադար զանոնք՝ որ իր համակրութեանց մէջ մասնաւոր տեղ մը գրաւած են: Ո'վ չէ լսած այն անձին մասին, զոր ինք Մալկաշ մականուանած էր, որովհետեւ ան հետախուզական ճամբորդութիւն մը ըրած էր Մալալկաւար, Ժիւլ Նէրօն, եռանդուն բնապատումը, որ միջատարանութեան գիտութեան նախաձեռնը ըլլալ կ'ուզէր: Օգը աղւոր եղած օրեր, անոնք յաճախ միտսին թիթեռնիկ հալածելու կ'երթային, այն կենդանիները՝ որոնք իրենց քմահաճոյքները կը պտտցնեն ծաղիկներու շուրջը:

Եթէ Ներօ տունէ դուրս թափառաշրջիկ արշաւներու իր մտերիմն էր, Ֆրանսուա Ռօլլինա ալ տունի բարեկամն էր, իր սիրտին աւելի մօտ բարեկամ մը: Ինք կը գրէր, եւ թերթերը, իր քովը, կը դիզուէին, իր անխոնջ գրիչին շնորհիւ: Իսկ Ռօլլինա՝ լուռ ու երազկոտ, կը հետեւէր անոր մտածումներուն: Տխուր, վերապահ, եւ անձնուէր մէկն էր ան: Իր շուրջը թռչող ուրիշ բարեկամներ ալ չէին պակսէր: Ժօռթ Սան իր տունին մէջ մեծ տեղ մը առած էր փոթորկալից Միշէլ Եր Պուրժի, որուն ճարտասանութեան որոտումը կը ճայթէր այդ խաղաղութեան մէջ: Սան զինքը Էվլերարտ կը կոչէր, ինչպէս «Կօլուա» կ'անուանէր Ալֆօնս Ֆլէօռին: Այս նախնական շրջանի հիւրերուն մէջ, եկած անցած են Շառլ Տիւվէռնէն, Բլանէ եւ Կլուսթավ Բարէն, որ անմահացած է ձնով մը, առաջին էջին վրայ գլուխ-գործօցի մը, Mare au diable.

Յետոյ, տարիներուն հետ, յարարերու-  
թիւնները աճելով և փառքը մեծնալով, ու-  
րիշներ եկան, որոնք կը պատկանին Նօհանի  
կեանքին երկրորդ փուլին, և որոնք եթէ  
միւսներուն պէս ծննդավայր հողի արմատ-  
ներով չեն կապուած իր համակրութեանց  
հետ, իրենց նրբամատութեամբը մուտք գտած  
էին իր քով: Ժօռտ Սան ատեն մը սողոր-  
ուեցաւ ընկերային նորազարթ գաղափարնե-  
րով, հաճելի ըլլալու համար Compagnonageի  
հեղինակին, ատաղձագործ Ակոիքօլ Բէռ-  
տիկիէն, որ իր բնավայրին ուխտաւորներէն  
մէկը եղաւ: Էօթէն Լամպէռ, կատուի նկա-  
րիչը, ինք ալ չափազանց հրապուրուեցաւ  
հոնկէ, և իրեն արտօնուեցաւ հոն մնալ ամիս  
մը: Տասնըհինգ տարի մնաց հոն վալէ Նուա-  
ռի ծոցը: Գեղարուեստի և գրականութեան  
մէջ անուն ունեցող ուրիշ շատ աւելի փայ-  
լուն մարդիկ, Շօրէն, Էօթէն Տըլադրուա,  
Թէօֆիլ Կօթիէ, Էաֆօն Ապու, Տիւմա Որդի,  
Ֆլօպէս, մերթ ընդ մերթ ժամանակ ան-  
ցուցին հոն:

Ֆլօպէս, Սանի մօտ, Նօհանի օլը շնչեց  
միայն, և քանի մը օր, երկար վիճաբանու-  
թեան մը թելը վեր առաւ, իր հաճոյակատար  
և սիրասուն բարեկամուհիին հետ, վիճաբա-  
նութեան, ուր անոր մասին ունեցած իր յո-  
ռետեսութիւնը ի յայտ կուգար աւելի սի-  
րազեղ քան իրական:

Ֆլօպէս՝ գիշեր մը ներկայ դռնուած էր  
Մարքի քը Վիլլիմերի ներկայացումին, և  
անմիջապէս վազած էր անոր հեղինակին  
քով, իր աշխատութեան մեկուսարանը,  
յայտնելու համար իր հիացումը: Իրենց հա-  
մակրութիւնը այդ թուականէն կը սկսի, և  
կը տեսէ մինչև վերջին օրը:

Երբ Ֆլօպէս կը լքէր Նօրմանտիաի իր  
անկիւնը, այցելութիւն տալու համար Նօհանի  
տիկինին, և քիչ մը ատեն մնալով՝ իր եր-  
դիքին տակ, իր այդ մտադրութիւնը էջ մը  
կ'աւելցնէր այդ ընտանի տաճարին մէջ իրենց  
ունենալիք զուարճութեանց ծրագիրին:

Որովհետեւ, եթէ հոն շատ կ'աշխատէին  
անոնք, — խօսքս Ժօռտ Սանի վրայ է, — գի-  
տէին նաեւ ժամանակը վայելել և անով ձանձ-

րանալ: Սան շատ քիչ կը փայլէր խօսակցու-  
թեան մէջ, և սովորական խօսակցութեան  
մը ձեւէն դուրս չէր ելլեր, նախընտրելով  
մտիկ ընել, աչքերը բաց երազել, ձգել որ  
ուրիշները խօսին: Ասոր փոխարէն, մեծ սէր  
ուն'ր թատրոնի, և մեծապէս կ'ոգեւորուէր  
երբ խնդրը իր տունին նեղկուկ բեմին վրայ  
ներկայացում մը կազմակերպելուն վրայ ըլ-  
լար: Այդ բեմը չինել տուած էր ան՝ դաւի-  
թին ձախ կողմը: Գործերուն արժէքը, դե-  
րակատարներուն տաղանդը, եւ յաճախ հան-  
դիսականներուն գիրքը՝ կը մեծցնէր, գերա-  
զանցապէս կ'ընդարձակէր այս ընտանեկան  
թատրոնին շրջանակը: Ռօզ Շէրիի, Անուլտ  
Բլէսսիի, Լէա Ֆէլիքսի պէս կատակերգուներ,  
Պօքամի, Պէրթօի և Թերօնի պէս դերա-  
սաններ, իրարու դէմ կուգային հոն, և  
մրցակցութեան կ'ելլէին՝ տաղանդի և շնոր-  
հալիութեան մասին:

Ժօռտ Սան հարիւրի չափ հատորներ ար-  
տադրած է: Իր ինքնատիպ և թափանցող  
միտքը, օժտուած իւրաշրջութեան (assimila-  
tion) գերազանց ձիրքով մը, միշտ լարուած  
է գործին վրայ եւ իր ղմայելի ոճը թեքած  
է ամէնէն փոփոխական սեռերուն: Բայց ան  
գերազանցապէս մեծ գրագէտ մը և առաջ-  
նակարգ գիւղանկարիչ մը եղաւ: Ամէն բանէ  
առաջ, մեծ սէրը ունեցաւ գեղեցիկ նկար-  
ներու: Սան ինքզինքը գերազանցեց՝ զա-  
նոնք նկարագրելու մէջ, վառուած իր եր-  
եւակայութենէն, սողորուած՝ տարտամ կեր-  
պով շարժող ու շնչող իր երազներովը, եւ  
միեւնոյն ժամանակ, զանոնք կերպարանա-  
ւորեց իրենց ամբողջ չքնաղ ճշդութիւնովը,  
արուեստին բիւրաւոր օժանդակութիւննե-  
րովը:

Այս գերազանց յատկութիւններուն հա-  
մար է որ, ֆրանսական գրականութիւնը  
փառաշուք յարգանք մը կ'ընծայէ անոր,  
այն տեղերուն մէջ իսկ, որոնք այդ յատ-  
կութիւններուն փթթիլը եւ զարգացումը  
տեսան:

ՖԻԵՏԵՐԻԲ ԼՕԼԵՆ

ՍՊԷԼԷԼԱ

## ԱՂԶԿԱՆ ՄԵ ՕՐԱԳԻՐԵՆ ՔԱՂՈՒՍԺ

### ՆԵՐԵՓԱՐԵՐԻ

Անշուշտ դո՛ւն ալ ինծի պէս ուրախացար հայ երիտասարդի մը ողբերգութեան մէջ առաջին մրցանակը շահելուն լուրը առնելով Բարիզէն: Պէտք է խոստովանիլ որ մեզի հայտարարողի պատիւ մը չէ աշխարհիս ամէնէն մեծ ու ամէնէն ալ խոստապահանջ Բոնսէրվադուաին առջև ողբերգութեան հայ վկայեալ մը տեսնելը, երիտասարդ մը, որ ինչպէս ֆրանսացի թատերական քննադատները կ'ըսեն, իր վրայ կը միացնէ արուեստագէտի մը բոլոր խիզախութիւնները, նրբութիւնները, դիտելու և զգալու կարողութիւնները: Եւ նոյնիսկ Բադել Մէնտէս, մեր ողբերգակին, —չեմ գիտեր, պէտք կ'այլ ըզելու, Մաքսուտեանի, —անա՛նկ ապագայ մը սահմանեց որ թերեւս ֆրանսացի դերասաններուն նախանձը գրգռեց իրաւացիօրէն, և չատ մը զարմացումներու, յափշտակութիւններու տեղի տուաւ: Այդ հուժկու, այդ վիպական, հզօր, դիւրայոյզ, ժուժկալ գերասանը, —ածականները Բադել Մէնտէսին են, —որ մը թերեւս աշխարհիս ամէնէն մեծ ողբերգակը ըլլայ, քանի որ ո՛չ քաջալերութիւնն է իրեն պակասողը ո՛չ ալ միջավայրին կարեւոր ազդեցութիւնը: Հո՛ս է խնդիրը, քաջալերութիւն, միշտ քաջալերութիւն պէտք է: Վատահ եմ որ մեր դրագէտներէն և բանաստեղծներէն չատեր եթէ ֆրանսերէն մտածէին, ֆրանսերէն զգային ու ֆրանսերէն գրէին, քաջալերութեան զօրաւոր ազդեցութիւնովը շատ աւելի դիրքի, համբաւի տէր, շատ աւելի հռչակաւոր մարդեր ըլլային թերեւս քան ինչ որ... են: Պարապ խօսք է թէ տաղանդը ո՛ւր որ ալ ըլլայ կը յայտնուի, ծածկուիլ չը գիտէր: Անո՛նք միայն կը վիժին, կը կքին, կը տըկարանան՝ որոնք ուժը չունին իրենց մէջ ուրիշներու հետ մրցելու, յառաջդիմելու, զարգանալու, համբաւ շահելու և ամենաուրիշ խոյնդոտէ մը կը վհատին, կ'իյնան՝ իրենց առաջին քայլերը դեռ չառած:

Կը տեսնենք ահա՛ երիտասարդ Հայ մը որ զգալու, խոկալու տրամադրութիւնովը, տաղանդովը բոլորին հիացումը կը գրաւէ: Առանց քաջալերութեան, ո՛չ Մաքսուտեան ողբերգակ մը պիտի ըլլար, և ոչ ալ Թէն հիանալի քննադատ մը: Ամէն գրող, հրապարակագիր, դերասան, ամէն մեծ մարդ, ողբերգակ, բանաստեղծ, երաժիշտ, նկարիչ, խրախուսանքի և զգալու ուժին պէտք ունին՝ ապրելու եւ յառաջդիմելու համար:

### ՉՈՐԵՓԱՐԵՐԻ

Խօսքը մէջերնիս, աղջիկներս ալ տեղերնիս մնանք: Իրաւունք ունին ի՛նչ որ կ'ըսեն: Շատերու համար խտեղ ըսուած բանը իրենց երեւակայութեան մէջ գոյութիւն ունի միայն. անկից անդին ո՛չինչ: Իրականութեան մէջ դրամ կը պոռան, դրամ կը պոռան ամէնքնին մէկ բերան: Կ'ատեմ, սարսափելի կերպով կ'ատեմ կեղծող աղջիկները: Ի՛նչ կը շահին արդեօք կեղծիքի այդ միամտութիւնով, միտքի այդ աններդաշնակ սահմանովը: Անանկները դրամին հետ կ'ամուսնանան և մաղերնին՝ չճանչցած, չտեսած մարդու կնոռն վիզը կը փաթտեն: Այս մասին ըսելիքներս ինծի կը վերապահեմ, որովհետեւ կը վախնամ որ կ'ելլեն սեռակիցներս զիս կը բամբասեն չարամտօրէն: Բոլորովին տարբեր կը խորհիմ ես, և սիրոյ մասին ունեցած անկախ կարծիքներս, շատ ուժգին են, տեղի չտալու աստիճան: Կամայ կամայ ամէն սիրողի վրայ ալ կասկածիլ կըսկսիմ. այդ պատրող խաբող մարդոց մէջ անկեղծ մէկու մը հանդիպելը ինքզինքս երջանիկ կարծելուն պիտի նմանէր ինչ որ գոյութիւն չունի:

Հոգի, սիրտ. միտք, ասոնք ապրելէ դադարած են հիմա, ասոնք չէ՛ որ կը գնահատուին սիրոյ մէջ, ասոնք չէ՛ որ կը փնտռուին ամէ՛ ուն կողմէ, հակառակ երեւոյթին: Է՛հ, սէրը հաշիւին հետ կը շփոթեն ու սիրտն ալ քսակի մը հետ: Ու դեռ ամէնուն առջեւ, ապրելու պահանջումները սիրոյ կը վերադրեն, փոխանակ կեանքին վերադրելու:

Կամչնամ, իրա՛ւ որ կ'ամչնամ ասոնց վրայ անդրադառնալէ:

### Հիմնագրքի

Ինչո՞ւ կը կրկնես հարցումդ: Արդեօք չկրցայ ուղարկելդ պէս պատասխանել: Բայց շատ պարզ է, սիրելի՛ Ջարուհիս: Ծածկանունները կը գործածուին կա՛մ հետաքրքրութիւն չարժեքով, և կա՛մ սքո՞ղելու համար բացարձակապէս: Ծածկանունով ստորագրուած շատ մը յօդուածներ կը նայիս որ չսիրած մէկ հեղինակդ քեզի սիրցնել կուտան: Մեր մէջ դրեթէ ամէն ծածկանուն յայտնուած է օրը օրին եւ կա՛մ ժամանակէ մը ետքը: Բայց սիրուն ու անակնկալ հաճոյքներ կը պատճառէ միշտ այդ խաղը: Խնդիրը ինքզինքը զսպելուն եւ խորհրդապահ ըլլալուն վրայ է: Ծատ դիւրին է, անկից անդին, ուղարկելդ պէս չարժիլը: Բո՛ւն իսկ ստորագրութիւնովդ մերժուած նորալէպ մը կրնա՛ս խմբագրական ծանօթութիւնով մըն ալ հրատարակել տալ՝ պահուած, գաղտնի մնացած ծածկանունի մը անունին հմայքով: Այսպէսով, կրնաս շատ անգամ բո՛ւն ըմբռնումներդ, կարծիքներդ, գաղափարներդ հետադուրս, վերլուծել, ամէնուն հասկցնել. կրնա՛ս առանց վախճալու այսինչ գրազէտին վրայ ուսումնասիրութիւն մը հրատարակել, շատ մը ուրիշներու ալ չհանելով, անոնց թերութիւնները յեր հանելով: Մեր բանաստեղծներէն անոնք որոնք սիրած են ու կը սիրեն, գրեթէ ստիպուած են իրենց պաշտումի տենդոտ ու մոլեգին սպաւորութիւնները եւ իրական ազդուութիւնները, զգայութիւնները, կեղծելու, շփոթել տալու կա՛մ անբռնաբարելի, մթաքօղ ծածկանունով մը գրելով, և կամ, — չհասկցուելու ուրիշ կերպ մը, — վաղուան զգալիք ցանն ու վիշտը, երէկուան երազները, այսօրուան հեշտազգայութիւնը բոլորն ալ իրարու խառնելով, ձուլելով, իրարմէ առաջ ու ետքը արտայայտելով հակաբանութիւններ, բռնազբօսիկ ծիծաղով մը, ժողովրդային «որո՞ւն կ'ուղղես»ներու տարափէն, աղտոտ, գռնհիկ ինթադրութիւններէ զերծ մնալու համար:

Բանաստեղծներ կան թերեւս որոնք փառքի, համբաւի համար չէ՛ որ կը գրեն: Մէկ

քանի ծածկանուններ կը ճանչնաս դուն անոնցմէ, անցեալ օր ըսի արդէն: Կարծես բանաստեղծութիւնը միջոց մըն է, անանկներուն համար, իրենց սիրելի ապացուցանելու, դիմացինին վրայ միշտ մտածելին հասկցնելու, անոր հետ, երազի մէջ ըլլալու պէս, խօսելու կը ծառայէ միայն: Կը բաւէ որ անիկա կարդայ ու հասկնայ: Հոգ չէ թէ ինք, բանաստեղծը, գայթակման ունենայ բանաստեղծութեան մէջ, զգացումին զոհելով արուեստը, ուր հաւաքափութիւն, բառերու երաժշտութիւն, ճշգրտագիտութիւն, յանգի անսխալութիւն, գիծերու հաւասարութիւն կը պահանջուի: Կը բաւէ որ իր սիրականին կարենայ ինքզինքը ներկայացնել իրր զգացումի, սիրոյ ողջակէզ մը, որ հաւասարին խոշտանկումները, սպասումները, կարօտին չարչարող գաղափարները, հասնելու երազը, խեղճին անուշ, անբջայող գէմքը կը հալածէ շարունակ, հասնելով, փրփրելով, գերազրգուելով: Բնական, ներքին զգայական պէտքի մը հաւար կը գրեն շատեր, և անոնց համար իրենց արտադրութիւններուն հաւներ ես, չես հաւներ, կարեւորութիւն չունի: Եւ ճիշդ այդ պատճառով է որ ծածկանունի մը խորհրդափակ քողին տակ կերթան կ'ապաստանին, չունչներին ջղաճրգօրէն զսպած, թաղծոտ լուրթեամբ մը, չճանչցուելու չճաղրուելու զգուշանորութեամբ:

Ա՛լ կարծեմ հիմա հասկցար թէ ինչո՞ւ ծածկանունները շատցեր են բանաստեղծութեան մէջ:

### Ուրբաթ

Ուրախութիւնս բացատրելու համար բառեր չեմ կրնար կոր գտնել, սիրելի՛ բարեկամուհիս: Դպրեմանքին համակրելի վանահօր և հմուտ ուսուցչապետին կրկին օրուան մարդ դառնալը չես գիտեր ինչ հրճուանքով, ինչ անկեղծ ուրախութեամբ կը լեցնէ հոգիս և ես ասկից աւելի յարմար առիթ մը չեմ փնտռեր այդ հիմնալի բանաստեղծին և գիտնական եպիսկոպոսին համար ունեցած սքանչաքս բացատրելու քեզի, դո՛ւն որ ինծի չափ, ու ինծի հետ միշտ զմայլանքով կար-

դացած ես անոր գրչի արտադրութիւնները և հետուէ հետու լսած՝ այն հոգեշունչ պերճախօսութիւնը, արտայայտելու հրաշալի եղանակները, որոնցմով եղիչէ եպիսկոպոս Դուրեան կը քարոզէ բեմէն:

Իզմիր Դուրեան Սրբազանի մը պէտք ունէր, ու եղիչէ եպիսկոպոսն ալ՝ Իզմիրի մը: Ասկից աւելի ճշգրիտ և սիրուն կարգադրութիւն կարելի չէր երեւակայել: Չեմ ուզեր կարծել սակայն որ Դուրեան Սրբազան իր թեմին գործերովը զբաղելուն համար, ասկից վերջը մեզի պիտի զրկէ իր պատուական գրութիւններէն, աղուոր քերթուածներէն, հմտալից քննադատութիւններէն:

ՄԱՌԻ ԵՈՒՀԱՆՆԵՒՍԵԱՆ

## ԿԵԴՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԸ

Կեդրոնական Վարժարանը իր վերջին եօթնամեայ չրջանը բոլորած ըլլալով այս տարի, ունեցաւ եօթը չրջանաւարտներ որոնց վկայականներու բախտովը կատարուեցաւ հինգչարթի առաւօտ, Ղալաթիոյ խորհրդարանի սրահին մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր՝ չրջապատուած եպիսկոպոսներէ ու վարդապետներէ: Պատրիարքարանի ժողովականներէ և ուրիշ ծանօթ անձնաւորութիւններէ զատ, ներկայ էին նաև Վիէննական Միթիարեաններէն Հ. Եղիշէ Գաֆթանեան և Հ. Գարրիէլ Մէնէվիլեան վարդապետները, Բողոքականաց ազգապետ էֆ. Ն. Բրօֆ. Ճէճիզեան ու Տիկիրը և ուրիշ հրաւիրեալներ, ինչպէս նաև ուսուցիչներ մամուլի ներկայացուցիչներ եւ այլն:

Խնամակալութեան ատենապետ Յակոբ էֆ. Էսսեան կարդաց ընդարձակ տեղեկագիր մը որով բացատրութիւններ կուտար վարժարանին կրթական ծրագրին ու դասաւանդութեանց վրայ և մէկիկ մէկիկ կը յիշէր ներկայ խնամակալութեան կազմութիւնը, եկամուտներու կանոնաւոր մատակարարութիւնը, Ե. դասարանի կազմութիւնը, 1897էն մինչեւ այսօր՝ եօթնամեայ չրջանին առեւած

արդիւնքները և ուրիշ շահեկան մանրամասնութիւններ: Յետոյ ներկայացուց ընթացաւարտները որոնք ծափահարութեանց մէջ առեւծ ստացան Դիսուլթեանց կամ Դպրութեանց պսակաւորի վկայականները: Այս պարոններն են Գրիգոր Խանճեան, Հրանտ Դըրըգճեան, Լեւոն Ղարիպեան, Երուանդ Նազարեան, Միհրան Ջէրաէեան, Միքայէլ Սաչիկեան և Արիկ Հանչէրեան:

Շրջանաւարտներէն երեքը ճառեր կարդացին՝ օսմաներէն, հայերէն ու ֆրանսերէն լեզուներով: Յետոյ խօսք առաւ Ուսումն. Խորհուրդի ատենապետ Տօքթ. Վահրամ էֆ. Թորգոմեան՝ շնորհաւորելով Կեդր. Վարժարանին ընձեռած արդիւնքները և Վարժապետանոցի մը հաստատման պէտքը շնշտելով: Թէ՛ Տօքթ. Թորգոմեան էֆ. և Թէ՛ նախորդ բանախօսները երախտագրութեամբ յիշեցին Վեհ. Կայսեր բարձր հովանին որուն շնորհիւ կրթական գործը կը զարգանայ ու դպրոցները կը յառաջդիմեն:

Ս. Պատրիարքը հակիրճ բանախօսութեամբ մը պարզեց իր անսովորութիւնները Կեդր. Վարժարանին նկատմամբ, ներկայ եօթնամեայ չրջանը յկատելով այդ հաստատութեան երկրորդ ու արդիւնաւոր երախտայրիքը, գովելով խնամակալութեան ջանքերը և ուսուցչական մարմնոյն աշխատութիւնները: Ն. Սրբազնութիւնը մասնաւորապէս փափագ յայտնեց որ բարեկեցիկ ծնողքներ ալ յօժարին Կեդր. Վարժարան զրկել իրենց զաւակները՝ փոխանակ օտար դպրոցներու: Ն. Սրբազնութիւնը քաջալերական խօսքեր ուղղեց ընթացաւարտներուն և յորդորեց որ գործնական կեանքի մէջ կատարեն այն անշիւ առաջադրութիւնները զորս պարզած էին իրենց ճառերով:

Ս. Պատրիարքը իր բանախօսութիւնը աւարտեց բարեմաղթութիւններով Վեհ. Կայսեր արեւշատութեանը համար, որոնց ձայնակցեցան ներկաները:

Հանդէսը փակուեցաւ «Պահպանիչ»ով և ներկաները մեկնէին առաջ՝ իրենց խնդակցութիւններն ու գոհունակութիւնը յայտնեցին խնամակալութեան:

# ՍԻԵԼԱՆԲԱ

SIELANKA



## ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԱՏԿԵՐ ՄԸ

Թարգմ. ՍԱՐՈՐԴԻ

Հեղինակ. ՍԵՆՔԻԷՎԻՉ

Բոլորը մտիկ կ'ընէին Աստուծոյ այդ անմըրցելի երգիչին: Հարսնամատերը ջուրէն վեր առին իրենց գլուխները, անմոռուկները իրարու վրայ բռնեցին, դադրեցաւ խշրտուքը եղիգներուն, ոչ մէկ թռչուն համարձակեցաւ ձայն վերցնել, բացի յիմար ու խառնակիչ կկուէն որ հանդարտ թռիչքով մը անցնելով ջուրին վրայէն նստաւ ճիւղի մը վրայ, վերցուց գլուխը, բացաւ կտուցը լայնօրէն և անխորհուրդ ձայնեց, — կու — կո՛ւ, կու — կո՛ւ...

Ի վերջոյ սակայն, ամօթահար իր յիմարական արարչին վրայ, յանկարծ լռեց:

Ի զո՛ւր Քասիա վտակին եղերքը կանգնած, անմոռուկները ձեռքին մէջ, դարձաւ ան կողմը ուրկէ լսուեցաւ կկուին ձայնը եւ հարցուց.

— Կկո՛ւ, օ՛, կապուտակ կկո՛ւ, երկար պիտի ապրի՞մ տակաւին:

Կկուեն չի պատասխանեց:

— Կկո՛ւ, հարուստ պիտի ըլլա՞մ ես:

Կկուեն բան մը չըսաւ:

Յետոյ պատանին հարցուց, —

— Կկո՛ւ, մօխաբոյն կկո՛ւ, իմ ա՛մուսնութեանս օրը մօ՞տ է:

Կկուեն դարձեալ չի պատասխանեց:

— Պատասխան չի պիտի տայ, եկուր ետ դառնանք, ըսաւ Նասիօ:

Դարձին դտան այն մեծ քարը որուն մօտ ձգած էին սակառն ու թարշամած տունկերը: Քասիա անոր տակ խոտին վրայ նստաւ և սկսաւ պսակներ հիւսել, որուն մէջ Նասիօ ալ ունէր իրեն: Պրնէք եկաւ կեցաւ անոնց դէմ, իր մաղոտ թաթերը դէպի առջև երկընցուցած, լեղուն կախ, յողնութենէն հեւքօտ՝ բայց նոյն ատեն աչքերն ասդին անդին՝ գտնելու համար կենդանի մը որուն վրայ խոյանար և ժխոր հանէր: Անտառին

մէջ անդորրութիւն կը տիրէր ամէն դի: Արեւը դէպի մայրամուտ կը խոնարհէր և շառագոյն ճառագայթները անցնելով ծառերու սաղարթներուն և մայրիկներու փշիկներուն ընդմէջէն, անտառին գետինը կը ծածկէին մեծ ոսկի կէտկիտումներով: Օդը չոր էր և Արեւմտեան կողմը իրիկուսն աճող լոյսը կը տարածուէր հալած ոսկի և սթի ծովի մը պէս: Փարնան պարզ ու տաք երկինք մը կը բոցավառէր երկնակամարին վրայ: Անտառին մէջ օրուան աշխատութիւնը աստիճանաբար դադարի կը սկսէր. լռած էին փայտփորին կտուցին բախումները, սե ու կարմորակ մրջիւններ կարգերով իրենց իրիկուան լոյսէն և արեւին ճառագայթներէն կարմիր — մրջնակոյտերը կը դառնային: Դրջիւններէն ո՛րտնք մայրիկ փշիկներ, ո՛րտնք ալ միջատներ կը կրէին իրենց բերաններուն մէջ: Անտառի պզտիկ մեղուններ հոս ու հոն բոյսերու մէջ կը շրջաշրջէին իրենց սովորական զուարթ բզզիւնով — Տանա՛, ո՛հ, տանա՛, — և կը լրացնէին իրենց վերջին բեռը մեղրափոշիի: Ծառերու ճեղքուած կեղեւներուն խորշերէն դուրս կ'ելլէին նսեմ ու խուլ լէզէոնները գիշերուան, ոսկի լոյսին հեղեղներուն մէջ՝ պայգաթիթեռներու հոյեր կը վրստային, մեղունները հազիւ տեսանելի էին աչքի, իսկ մոծակները սկսան իրենց տխոր երգերը: Ծառերուն վրայ թռչուններն ընտրեցին իրենց թառքը քնանալու համար: Երբեմն, վայրկեան մը, դեղնակտուց սարեակը կամ ագռաւ մը թռչուն իրարու կը զարնէր: Թառքի համար ծառ մը ընտրելէ վերջ թռչունները կը կռուտէին լաւագոյն ճիւղի մը վրայ կենալու համար: Ձայները հետզհետէ առելի նուաղեցան, աստիճանաբար, և վերջնականապէս լռեցին և հիմա ծառերու սօսափիւններն էին որ լռութեան անդադրու-

թիւնը կը վրդովէին: Յախի մացառը իր դեղնորակ տերեւները վեր կը վերցնէր, կը լսուէր մրմուռնը չքեղաչուք կաղնիին, կամ ցարապին կը շարժէր իր խոպոպները ու ասոնց ալ լռութիւնը կը յաջորդէր կրկին:

Մինչ իրիկունը աւելի և աւելի կը շառագնէր և արեւելեան կողմը երկնքին սերտ կապոյտը կը մթննար, անտառին բոլոր ձայները կը խառնուէին այն խմբերգին—անտառին խմբերգին—որ տակաւին չի ննջած, գիշերէն առաջ կազօթէ և կը կրկնէ իր «Հայր մերը»: Մտուերը իրարու կը գովարանեն Աստուածը, և կարելի է ըսել թէ կը խօսակցին մարդկային լեզուով:

Միայն անմեղունակ հոգիները կը հասկընան այս զօրաւոր և օրհնեալ լեզուն, միայն այն սրտերը որ ամենէն աւելի անմեղ են՝ մտիկ կ'ընեն և կ'ըմբռնեն երբ առաջին խմբերգը, կաղնիներու ծայրերուն, կըսկսի,—

— Ուրախացէ՛ք, քոյր մայրիներ, Տէրը այսօր մեզի տուաւ խաղաղ և տաք օր մը և այժմ լուսազարդ գիշերը կ'իջնայ երկրի վրայ: Մեծ և ամենակարող է Տէրը, զօրաւոր քան մեզ, բայց դորովալից: Հէնց, օրհնեալ ըլլայ իր անունը բարձունքներուն վրայ, ջուրերուն մէջ, երկրի վրայ և օդին մէջ:

Մայրիները պահ մը մտածեցին կաղնիներու արտասանած բառերուն վրայ և յետոյ պատասխանեցին ներշնչեալ խմբերգով,—

— Ո՛վ Տէր, տե՛ս, գովաբանելու համար քեզ, իբր թէ խնկամանէ մը մատուցուած քաղցրահոտ բալասան կը կաթկթենք, և կը սփռենք մեր զօրաւոր եւ մշտաբոյր ռետնաթիւն անուշահոտութիւնը: Հայր մեր որ յերկինս ես, սո՛ւրբ եղիցի անուն Գո:

Յետոյ ցարապիները երգեցին.

— Իրիկունն վերջապէս երկնակամարին վրայ կը բոցավառի, Տէ՛ր, եւ անոր շողերէն մեր սաղարթներն ալ բոցավառ եւ ոսկեգոյն կը շողան: Հէնց մեր ոսկերանգ սաղարթներով օրհներգ մը կը բարձրացնենք Բեզի, Տէր, եւ մեր նուրը, երկար ճիւղերը քնարէն են որ կը հնչեն Բեզի համար, ո՛վ մեր բարի Հայրը:

Յետոյ մեղամաղձոտ եղբուսները.

— Յորեկուան տաքէն չարչրուած մեր նսեմ ճակատներուն վրայ իրիկունն ցօղը կ'իջնայ: Գովաբանութիւն Տէրոջը, եղբայրներ եւ քոյրեր, ուրախացէ՛ք, որովհետեւ իրիկունն ցօղն է որ կ'իջնայ:

Այս բոլոր խմբերգներուն մէջտեղ միայն բարտին է որ վարանքով կը դողդղայ, որովհետեւ բարտին էր որ Փրկչին խաչելու թեան փայտը հայթայթեց, եւ ընդմիջումներով կը հեծեծէր.—Ո՛վ Տէ՛ր, գթա՛ ինձի:

Դարձեալ երբ պահ մը կաղնիներն ու մայրիները լռեցին, անոնց ստորտէն բարձրացաւ ցած, երկչոտ, պզտիկ ձայն մը, տըկար ինչպէս բզզիւնը մօզուկին, այնքա՛ն նուաղուն, իբր թէ լռութիւնն իսկ ըլլար: Այդ պզտիկ ձայնը կ'երգէր.—

— Ո՛վ Տէր, պզտիկ հատապտուղ մըն եմ ես, հովանաւորուած մամուռին մէջ: Պիտի լսես անշուշտ դուն ինձի, պիտի զանազանես զիս եւ գորովիս իմ վրաս, որովհետեւ թէեւ պզտիկ՝ բայց բարեպաշտ եմ, կ'երգեմ քեզի, մեծցնելու համար քու փառքը:

Այսպէ՛ս կ'աղօթէ անտառը ամէն օր, եւ ամէն իրիկուն այսօրինակ նուազ մը կը բարձրանայ երկրէն երկինք եւ կը թռչի բարձր, բարձր, վեր, ուր ալ կը դադրին ստեղծագործուած առարկաները, ո՛ւր լոյսերու արծաթ փոշիէն, ծիր-կաթիւնէն զատ ուրիշ իրեր չկան. իսկ անոնցմէ բարձր՝ միայն Աստուած:

Ասանկ վայրկեանի մը արեւը կը խոնարհեցնէ իր ճաճանչներով փառապսակուած գլուխը հեռակայ ծովուն մէջ. արաւորը կ'ուսէ փետատը եւ կը փութայ իր խրճիթը՝ իր զանգակներով բառաչող դուարը դաշտէն կը վերադառնայ եւ ոչխարները փոշիի ոսկի ամպեր կը բարձրացնեն: Մթութիւնը կ'իջնայ. հեռակայ գիւղին մէջ կը ձռնչեն ջրհորի կնճակները, կը շողան պատուհանները խրճիթներուն եւ հեռուէն, շատ հեռուէն կ'ոգայ ձայնը շուներու հաչիւնին:

Երբ Բասիա նստաւ մամուսպատ քարին տակ պսակներ հիւսելու, արեւը անտառին

ետին խոնարհած չէր տակաւին. ընդհակառակը, ճառագայթներ՝ որոնք ծառերու սաղարթներուն եւ ստուերոտ ուղեշնորուն մէջէն կը բեկեղեկէին, կը լուսաւորէին անոր դէմքը: Քասիա տաքէն եւ անտառին մէջ վազվզելէն յոգնած ըլլալով չի կրցաւ գործը փութկոտութեամբ առաջ տանիլ: Իր արեւակէզ ձեռքերով կ'ոլորէր ճիւղերը տունկերուն, տաք շունչ մը կը համբուրէր անոր քունքերն ու աղուոր դէմքը, իսկ ծառերուն ձայները կ'օրօրէին զայն եւ կըստիպէին հանգիստ քունի: Իր մեծ քնատ աչքերը սկսան շողալ, արտեւանունքները կը գոցուէին մեղմօրէն, Քասիա գլուխը հանգչեցուց քարին վրայ, անգամ մըն ալ բացաւ ծանրացած կոպերը լայնօրէն — տղու մը նման որ Աստուծոյ աշխարհին վրայ զարմանքով կը նայի — յետոյ չը լսեց ծառերուն սօսութիւնը. ծառերու կոճղերուն շարքերը, մայրիի փուշերով ծածկուած անտառին գետինը, ճիւղերուն ընդմէջէն տեսանելի երկինքը հետք չհատէ անորոյ երեւոյթ մը առին, իրարու խառնուեցան — ժպտեցաւ անմեղ կոյսը եւ ընկղմեցաւ քունի մէջ:

Իր գլուխը այդ վայրկեանին մեղմ շուքին տակ կը հանգչէր, բայց չապիկը որ լանջքը կը գրկէր՝ առաւօտեան լոյսին նման լոյսով մը ողողուած, ծիրանի եւ վարդագոյն կը տեսնուէր: Թեթեւ շունչ մը կեղեւէջէր ննջող կոյսին կուրծքը եւ ա'ն, իր խաղաղիկ քունովը, այնքան թովիչ էր մայրամուտի ճառագայթներուն մէջ որ, եսսիօ պատրանքն ունեցաւ զայն եկեղեցիին մէջ բաղմբփեան ծիրանիի եւ ոսկի ճառագայթներով լուսաշող պատկերներէն մէկը կարծելու:

Քասիա ձեռքին մէջ բռնած էր տակաւին կիսաւարտ կանանչ պտակ մը: Ան վստահաբար կը ննջէր թեթեւ հաճելի քունով մը, որովհետեւ կը ժպտէր քունին մէջ տղու մը նման, որ հրեշտակներուն հետ կը խօսի: Թերեւս ինքն ալ կը խօսակցէր հրեշտակներուն հետ, որովհետեւ պզտիկ տղու մը մաքուր եւ անմեղունակ սիրտը կը կրէր եւ այդ ամբողջ օրը ծառայած էր Աստուծոյ, յաջորդ օրը եկեղեցին պճնելու համար պրտակներ հիւսելով:

Եսսիօ նստաւ անոր մօտիկ, բայց չի քնացաւ: Իր գիւղացիի պարզ կուրծքը կընդլայնէր զգացումներով. այնպէս կը թուէր իրեն թէ հոգին թեւեր կ'առնէր եւ կը սալառնէր երկնքի անհունութեան մէջ: Աչքերը երկնակամարին յառած, չէր գիտեր թէ ինչեր տեղի կ'ունենային իր հոգիին մէջ: Սէրը կերպարանափոխած էր զանիկա:

Տակաւին երկար քնացաւ Քասիա եւ այսպէս երկուքը իրարու մօտիկ մնացին:

Նոյն ատեն իրիկուան ստուերները իջան: Շիջանելու մօտ ծիրանի լոյսը ստուերներուն հետ կ'ոգորէր: Լուռ անտառին մէջ մութը կոխեց: Խրճիթին եւ մարգագետնին ուղղութեամբ լիճին եղէգնուտներէն 'ուզար ողբաձայն վայելնը բուխճակին:

Յանկարծ պզտիկ եկեղեցին, որ լճակին անդիլի կողմը կիյնար, հնչեցուց Անժէլիսը: Այդ ձայնը սրաթեւ անցաւ միապաղաղ լիճին վրայէն, թռաւ իրիկուան սիւքին թեւերուն վրայ մաքուր, հնչուն եւ հեռագնաց: Այս ձայնը բարեպաշտները աղօթք: Կը հրաւիրէր եւ նոյն ատեն հանգստութիւն կ'աղաարարէր, — Հէրի'ք, աշխատանք եւ տաքութիւն, կը հնչէր զանդալը, եկէ'ք ննջել Տէրոջը թեւերուն տակ: Ո՛վ դուք, օրուան տաժանքէն յոգնածներ, գացէ'ք, գացէ'ք Աստուծոյ, Ան աղբիւրն է բերկրութեան. Ան կուտայ ձեզի հանգիստ, բարեբաստութիւն, քուն, քուն, քուն:

Երբ պատանին լսեց զանգակին ձայնը, երկիւղածութեամբ վար առաւ գլխարկը: Քասիա թօթափեց քունը իր աչքերէն եւ հարցուց:

— Ի՞նչ է որ կը հնչեցնեն:

— Անժէլիսը:

Երկուքն ալ ծնրադրեցին մամուպատ քարին մօտիկ, իբր թէ խորանի մը առջեւ եւ Քասիա մեղամաղձոտ ձայնով մը սկսաւ կրկնել.

— Աստուծոյ հրեշտակը Մարիամին աւետիս տուաւ:

— Եւ կոյսը յղացաւ Սուրբ Հոգիէն, պատասխանեց Եսսիօ:

— Ահա՛ Տէրոջը աղախինը:

Եւ այսպէս ծնրադիր այս պարզունակ տղաքը աղօթեցին: Զինչ ամառ գիշերուան փայլակը արեւելքէն արեւմուտք թռաւ, եւ այդ լոյսով երկինքէն թեւաւոր հրեշտակներու բազմութիւն մը իջնելով կախուեցաւ այս երկուքին գլուխներուն վրայ: Եւ Քա՛նիս ու Նասիօ իրենք ալ գոգցես հրեշտակ-

ներ—ինչպէս որ էին արդէն—խաւնուեցան հրեշտակներու այս խումբին, որովհետեւ չկար բան մը երկրի վրայ աւելի մաքուր, աւելի՛ սուրբ եւ աւելի ամեղունակ՝ որչափ այս երկու հոգիները:

ՎԵՐՁ

## ԱՆՈՆՔ ԶԵՆ ԹՈՌՄԵՐ



Տեսայ պատկերդ գոյներով ցայտուն,  
Պատկերդ զարնան հմայիչ սիրուն,  
Բիւր կակաջներու բաց կոկոն բերքեր.  
Կարծես քէ քեզի փունջ մ'էին կազմեր:

Սէ՛ր կեանք ցերեցող զարունն ես հագեր,  
Գարնան կեանքի մը սիրագեղ պատկեր,  
Աչերդ մշայուն գոգցես ըղձազին,  
Դեպ ի երկնաւոր աշխարհը նային:

Փունջ փունջ հաւսնուկներ պսակ են հիւսեր,  
Գու պայծառ նակսին անբիծ անսուեր.  
Ու երազ կեանքին բարձունքին վրայ,  
Թուի ամեն ինչ քեզ հոգեհմայ:

Ան քսէ սակայն, ո՛ր փունջ ո՛ր ծաղիկ  
Մէջն աւ աշխարհի չեն սին վաղանցիկ,  
Կեանքի զարունն ալ նման ադ զարնան.  
Զի՛ սահիր, չա՛նցներ շուտ ամպի նման:

Թող զարնան տիպար ծոցն ադ պատկերիդ  
Մտքի զարունն մը միտք սահիր վնիտ.  
Թող հոն բողբոջեն ցօղով սրբենի  
Շուտաններն անբիծ սիրոյ հաւաստի:

Անոնց քով անփայլ անշուք չե՛ն մնար,  
Նոյն իսկ մարգրէս պսակները վառ,  
Դու սիրոյ գութի ծաղիկներէն դի՛ր  
Ճակտիդ պերն պսակ, անոնք չեն բոռմիր:

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Յովհ. էֆ. Թափանձեան սրիր առեւտրական զբաղումներուն մէջտեղ հաճոյք կը դրայ հետեւելէ գրական ու կրթական հարցերու, Ուսուցչաց օգնութեան Մատուկին ձեռնարկը ապահով հիմերու վրայ դնելու համար սա գործնական ու առողջ գաղափարները կը յայտնէ՝ Արեւելիք ուղղուած նամակով մը զոր իր վերջին «Աջ ու ձախ»-ին նիւթ ըրած էր Արամ Անտոնեան։—

«Բանի որ նպաստը նկատները միայն կարօտ ուսուցիչները պիտի ըլլան, գործը զուտ բարեգործական չէ. հապա սահմանափակ բարենպաստակ մարմին մը, որ ինծի համար շատ մեծ տարբերութիւն մը չունի կենաց ապահովագրութեան ընկերութենէն։ Ասոնց օգուտը միայն անոնք կը վայելեն որոնք անդամ են անոր և որոնք սա հիման վրայ հաստատուած են. — այսինքն՝ ըսենք 20 տարուան համար կեանքէ կ'ապահովագրեն. եթէ այդ 20 տարուան միջոցին մեռար, ապահովագրեալ գումարը կը վճարեն և դուն կ'ըլլաս շահաւորը, եթէ ողջ մնացիր, ընկ.ը կ'ըլլայ շահաւորը։ Որովհետեւ վստահ չես թէ ողջ պիտի մնաս, ուստի կ'ապահովագրուիս։ Ողջ մնացողները կը վճարեն մեռնողներուն, այս է ճշմարտութիւնը, և սակայն ասոր մէջ անիրաւութիւն մը չկայ։

«Արդ՝ քանի որ միայն ուսուցիչներ պիտի կրնան օգտուիլ այս Մատուկէն, ըստ իս, մեծ մասամբ անոնք պէտք է որ կանգուն պահեն զայն։ Ինչպէս գործի աշխարհին մէջ կրնայ պատահիլ որ այսօրուան հարուստը վաղուան աղքատը ըլլայ, նոյնպէս ալ ուսուցչութեան ասպարէզին մէջ տոյսորուան շահող ուսուցիչը կրնայ վաղուան կարօտը ըլլալ։ Միեւնոյն սկզբունքին կը հետեւին բոլոր գործաւորներու մարմինները, անգործութեան պարագային գործաւորներուն օգնելու համար. ասի այնքան պարզ է որ այսքան բացատրութիւն իսկ աւելորդ էր։

«Ամէն ուսուցիչ պարտաւորեալ ըլլալու է իր ստացած ամսականէն մէկ կամ երկու առ հարիւր, և եթէ պէտք է — գէթ տարի մը — մինչեւ հարիւրին 10 վճարել այս Մատուկին, ամէն ամիս, կամ երբ որ գանձէ, և այս վճարումը կանոնաւորապէս շարունակելով

այնքան ատեն որքան կ'ապրի և ուսուցչութեան պաշտօնէն եկամուտ մը ունի։ Ո՛վ որ այս տուրքը չի վճարեր, ապահովագրած չըլլար ինքզինքը ի դէպ ծերութեան, հիւանդութեան, անբաղդութեան և այլ որ եւ է պարագայի, որով կարօտ վիճակի մը կը մատնուի և պէտք կը զգայ այս Մատուկին օգնութեան դիմելու։

«Ասոր դէմ ըլլալիք առարկութիւններէն գլխաւորը ըլլայ թերեւս սա թէ՛ արդէն այնքան փոքր վարձատրութիւն մը կը ստանան մեր ուսուցիչները որ կարող չեն անկից մէկ երկու և մանաւանդ հարիւրին 10 վճարել։ Եթէ ասիկա լուրջ առարկութիւն մը ըլլար, աշխարհի վրայ անխելք և անյաջող մարդոց թիւը շատ ու շուտ պիտի աւելնար։ Բանին տեսեր էք որ ամիսը 10 ոսկի շահած ատենսին՝ «Երկու ծայրը հաղիւ իրար կը բերենք» կ'ըսէին, իբր թէ 9 ոսկի շահելու ըլլային՝ մէկ ծայրը բաց պիտի մնար. բայց գիտէք, չէ՛, որ երբ 9 ոսկիէն աւելի չկրցան շահիլ՝ դարձեալ երկու ծայրը իրար բերին. երբ 5 ոսկիի իջաւ շահածսին՝ նորէն առանց ուրիշ բեռ ըլլալու ապրեցան. ուրեմն՝ ինծի համար գոյութիւն չունի եկամուտի այնպիսի վիճակ մը՝ ուրկէց 1—2 և մինչեւ իսկ 10 առ 100 պակասով անհնար ըլլայ ապրիլը։ Ուրեմն ուսուցիչ մը որ մինչև իսկ 200 դրուշ միայն կը շահի ամիսը՝ կրնայ 1) առ հարիւր, այսինքն 20 դրուշ վճարել այս Մատուկին. և ո՛վ պիտի համարձակի ըսելու որ 200 դրուշով ապրողը 180 դրուշով չը կրնար ապրիլ։ Այս բանը միայն անոնք կ'ըսեն, որոնք տակաւին սորված չեն յաջողութեան միակ պայմանը, այսինքն 10 շահիլ և առ առաւելն 9 ծախսել։ Կը հասկնամ թէ 200 դրուշով չէ կարելի ապրիլ, հապա 500 դրուշի պէտք կայ ապրելու համար, սակայն չեմ կրնար ընդունիլ որ 200 դրուշով ապրողը 180 դրուշով չի կրնար ապրիլ. կամ 500 դրուշով ապրողը 450 դրուշով եւ այս ալ հարիւրին տասնի պարագան է. այսինքն ամէնէն բարձր գումարը որ կրնայ պահանջուիլ։

«Եթէ ոմանք տալ չուզեն՝ մտածելով որ իրենք երբեք կարօտ չպիտի ըլլան, ասոր կը պատասխանուի։— Նախ թէ բնաւ այդ բանը ըսելու չեն իբր ուսուցիչ, քանի որ պարտին

ուսուցանել տղոց ճիշդ ատոր հակառակը, քանի որ այդ է ճշմարտորդը: Երկրորդ՝ եթէ ինքը օր մը չօգտուի ալ՝ կրնայ բարեգործութիւն մը նկատել այդ տուածը և իբր ուսուցիչ պէտք է գործնականապէս ցուցնէ թէ կարողը անկարողին, ունեւորը՝ չբաւորին պարտաւոր է օգնել, եւ եթէ բաղդը այնպէս բերաւ որ մինչեւ կեանքին վերջը օգնութեան պէտք չունեցաւ, աւելի երջանիկ համարելու է ինքզինքը, ինչպէս կ'ընէ այն մարդը որ իր կեանքը ապահովագրեց եւ 20 տարի ապրեցաւ, որով ընկ.ը աւելի շահաւոր եղաւ քան ինքը:

«Ուրիշ առարկութիւն մընալ սա կրնայ ըլլալ թէ անկարողներ այս ասպարէշը կ'ընտրեն՝ օգնութիւն ստանալու համար: Օրէնք մը կրնայ դրուիլ, օրինակի համար՝ մէկ տարի տուրք վճարողը այսքան նպաստի իրաւունք կ'ունենայ, երկու տարի՝ վճարողը անոր երկու անգամին, ասկից դատ, իրաւունք կըրնայ տրուիլ հոգաբարձութեան որ իր իմաստութիւնը գործադրէ, օգնութեան չափու մասին, ըստ պարագայի:

«Գալով թէ ինչ ընելու է բուն ներկայ վիճակին մէջ, պիտի ըսեմ.—Ան այժմ գէթ տարի մը կամ երկու՝ միայն փոքր նպաստներ տալ՝ մինչեւ որ այս եղանակաւ դրամազուխը աւելնայ եւ եկամուտը հաստատուի ու անգամներուն ո'րոնք ըլլալը ճշդութիւն: Ասի պատճառ մընալ չէ որ դուրսէն եղած օգնութիւնները դադրին կամ նուազանան: Ղէտով եւ այլ օրինաւոր ու բացառիկ միջոցներով դրամազուխը ձգտացուի»:

## ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐՎԱՐԱՆ

ԱՏԱՐԱՋԱՐ

Վարժարանիս յառաջիկայ տարեյրջանը պիտի սկսի Սեպտ. 2/15ին, ել. առաւօտ: Գիշերօթիկներու տարեթոյակն է 12 օամ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ.ի մէջ, և կէսը Յունուարի մէջ: Ծառաթը դայնակի մէկ դասի համար տարեկան 3 օամ. ոսկի և երկու դասի համար 5 օամ. ոսկի աւելի կը պահանջուի: Երգեհոնի դաս առնողները տարին 1ու կէս ոսկի աւելի կը վճարեն: Վարժարանին յայտագիրը ուղղներուն ձրի կը զրկուի: Ուրիշ տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպըլ—Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. էֆ. Գալաթեանի, ատենապետ խնամակալութեան, Ատարաղար:

3—8

## ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՎԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿ

25<sup>ր</sup> օտեւերջան

Վարժարանը, իր 25ամեակին առիթով վերակազմուած նոր և լաւագոյն կարգադրութիւններով, կը բացուի Դ. օր, Սեպտ. 7ին (Ն.Տ.): Առեւտրական ուսումներ մեծ տեղ մը կը բռնեն բարեփոխեալ Մրագիրին մէջ: Վարժարանին ուսմանց ընթացքը վեցամեայ է, 2 տարի նախապատրաստական, և 4 տարի ալ Վարժարանական կարգերու համար: Ուսուցչական Մարմինը կը բաղկանայ հմուտ և փորձառու ուսուցիչներէ, որոնց 5ը գոլէճներու ընթացաւարտներ են, և 1ը համալսարանական մը: Առողջական տեսակէտով՝ Վարժարանին դիրքը անզուգական է: Իր յատուկ բժիշկը մօտէն կը հսկէ աշակերտներուն առողջական վիճակին վրայ: Տնօրէնը և ուրիշ 4 գիշերօթիկ ուսուցիչներ, որոնք վարժարանին շէնքին մէջ կը բնակին, մօտէն կը հսկեն աշակերտներուն վարք ու բարքին վրայ: Վարժարանին տարեթոյակն է 16 օամ. ոսկի, որուն կէսը Սեպտ.ի սկիզբը վճարելի է, և միւս կէսը՝ Յունւ.ի վերջերը:

ՄԱՆՈՒ.—Կ. Պոլսէ եկող հին և նոր աշակերտները կրնան կէս զինով Հայտար—Փաշայի երկաթուղիով Իզմիտ դալ. դիմելով մինչև Օգոստ. 18/3, Պայպըլ—Հաուս, Դրիգոր էֆ. Ծահպաղեանի: Վարժարանին նոր յայտագիրը ստանալու համար դիմել Մր. Ո.Ո. Բիթի, Պայպըլ—Հաուս, Կ. Պոլիս:

2—10

## ՏՈՒԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ԲԱՐԻՉԻ ՀԱՄԱՆՍԱՐԱՆԷՆ

Կը դարձանէ զայոց հիւանդութիւններ (նեքին հիւանդութիւններ և վիրաբուժութիւն), կը կատարէ քթի, ականքի և կոկորդի գործողութիւններ:

Երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ Բերա, Մեծ—փողոց Բրէտի Լիոնէի քով, թիւ 331:

Երկուշաբթի և հինգշաբթի Գատը գիւղ, Տուվար Տիպի, թիւ 12.

1—10

Հաճոյքով կիմանանք թէ Հ. Գարրիէլ Վրդ. Մէնէվիշեանի հրաժարականը՝ Բանկայթիի Միսիթարեան վարժարանին տեսչութենէն՝ մերժուելու է Վիէննայի վանքին Աբբասօր Տեղակալ Հ. Թոռնեանի կողմէ, որ նամակով մը փափագ յայտներ է Մէնէվիշեան վարդապետին՝ շարունակել իր տեսչական արդիւնավոր պաշտօնը։ Որչափ ալ որ գրական ու բանասիրական աշխատութիւններով զբաղելու համար կուգէր առանձնանալ Հ. Մէնէվիշեան, բայց այստեղ իր վարած կրթական գործը մեծապէս պիտի վնասուէր իր հեռացումէն։ Աշակերտաց ծնողքները մասնաւորապէս գոհ պիտի մնան, տեղեկանալով որ յառաջիկայ տարեկշիւին մէջ ալ իրենց զաւակները չպիտի զրկուին իրենց ժրջան տեսուչէն ու դաստիարակէն։

**Ա. Զ. Գ. ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ** կողմէ հետեւեալը հաղորդուած է մեզ ի հրատարակութիւն։—

Մայրենի լեզու (Ն. Տ. Ղեւոնդեան) Ա. տարի 20րդ տպագրութիւն, 1904. 43 պատկեր. 2 ուկէս զրշ. — Բ. տարի 15րդ տպագրութիւն 1900. 66 պատկեր 4 զրշ. Գ. Տարի 9րդ տպագրութիւն 1902. 80 պատկեր 4 զրշ. Դ. Տարի 6րդ տպագրութիւն 1897 20 պատկեր 4 զրշ.։

Թուաբանութիւն պատկերադարձ (Յ. Եւստոֆեան) 3 ուկէս զրշ.։

Քրիստոնէական (Մարկոսեան) 3րդ տպագրութիւն 1897. 1 ուկէս զրշ.։

Ա. Գիրք Քրանսերէնէ ի հայ թարգմանութեան (Ռ. Յ. Պէրպէրեան) 3րդ տպագրութիւն 1903. 3 զրուշ.։

Մայրենի լեզուի այս չորս հատորները որ բաղմամբիւ տպագրութեանց արժանացած են, նմանօրինակ ընթերցարաններու հետ բաղդատելով միշտ կը պահեն իրենց առաւելութիւնը լեզուի մաքրութեան, նիւթոց դասակարգութեան և մանկավարժական շրջութեան տեսակէտով։

Մեծայարգ ուսուցչաց ուշադրութեանը կը յանձնուի մասնաւորապէս վերջերս հրա-

տարակուած Ռ. Յ. Պէրպէրեանի «Առաջին գիրք Քրանսերէնէ ի հայ թարգմանութեան» Գ. Տպագրութիւնը, որուն հասոյթը հեղինակը նուիրեց վեհաձայնաբար նպաստից Սընտուկին։

Սոյն գիրքը որ միակն է իր տեսակին մէջ, կրնայ օգտարագոյն կերպով գործածուիլ նախակրթարանաց մէջ, իբր առաջնորդ Քրանսերէն լեզուի ուսուցման։

Նպաստից Մատուկին հաշւոյն հրատարակուած գրքերուն առաւելութիւնը ա՛լ աւելի կը շնչտուի՝ երբ նկատուի որ ասոնց ամբողջ հասոյթը յատկացուած է գաւառական կարօտ դպրոցներու և որբանոցներու։

Ուստի՝ գաւառացի ու Կ. Պոլսոյ ընդհ. դպրոցներու մեծայարգ Տեսուչներուն ու Հոգաբարձութեանց ջերմապէս կը յանձնարարուի սոյն գրքերու գործածութիւնը իրենց Տնօրէնութեան տակ գտնուած վարժարաններուն մէջ։

Փոքրաքանակ ու մեծաքանակ առնողներուն խիստ գոհացուցիչ զեղչ կը տրուի։

Կը գտնուին բոլոր գրավաճառաց քով։

Զգուշանալ կեղծերէն

(ԿՅԻԲ Ազգ. Պատրիարքարանի)

## ՌՕՊԵՐԹ ԳՕԼԵՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեկշիւնը կըսկսի Սեպտ. 2/15ին։ Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար։ Վարժարանին մասնաւոր բժիշկը՝ ուսանողներու առողջութեան, մարմնամարդներուն և խաղերուն, ինչպէս նաև վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ։ Մարմնամարդի նոր և գեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարդի աւանդական գործիքներ, վերջին դրութեանց համաձայն։ Երկու տարիէ ի վեր բացուած է նաև փոքր տղոց յատուկ նոր շէնք մը, որ կ'ընդունուին մինչև տասը տարեկան աշակերտներ։

3—10

Հիմնադիր—Արսեմասէր Կ. Ս. Իիթիիճեմն Պատասխանատու—ՏԳՐԵԳ ՏՈՒԲ. ԵԴ. ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՆՆԻՔ Օրագրի

# ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ



ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճակում) ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏՈՒՍԿԱԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՔՍ ԼՈՒՔ ՏԵՊԱՎԻԹ

## ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. քնդդեմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏԻՏ)


Ապահովագրութիւնք կը կատարուի լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Իրամատկութիւնն է՝ Կ. Պոլիս, Բուքին Լիօնի

Ընդհ. եւ լիազօր. ներկայացուցիչ Թուրքիոյ

Պ. Տ. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Գրասենեակ, Պոլիս, Հանօթուլօ խան, Թ. 52-53-54-55-56 4-10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը աւանդաւոր, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

## Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Co.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

ԲԵՐԸ.

1. Մեծ փողոց, Պոլ. Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ.

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԼԱՏԱՆ.

Չարը Պոլս. Թ. 120.

Գրասենք եւ նորոգութիւնք արի.

Կատարեալ երաւիաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղուլուի տունը:



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱՅՐԱԽԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 Մարտ 20ի Կայս. Ուքրադով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք:

Ընկերությունը խիստ ջգպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի  
 ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ԼՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՂՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՍ-  
 ՆԵՐՈՒ ԴԷՄ, ԳԿԵԱՆՍ ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ-  
 ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՍՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ԲՆԿԷՆ ԿԵՆ, ՀԱՅԵՂԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԵ-  
 ՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ: — ԵՇ — ԴԵ — ԵԶ — ԵԸ — ԵԹ . Տիպի պատգամ , ոմին , ժամօժանդ

Ընկերութեան գրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 **திரைப்படம்**

Երայխաւորութեան գումար աւելի քան

137,300,000

Ընկերության ապահովագրություններուն վճարուած դրամա-

ԳՐԱԽ ԵՆ ԱՆՄԱՍՈՐԵՐ ՀԱՄՈՇՅՈՒՄ

282,000,000

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

54,000,000

ԱՄեն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան

խան, վոյվոտա, Ղալաթիւ, 334 Ժողովրդական պալատ

3 - 10

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔԻՊԵԴԻԱ ՏԸ ՊԵՂԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՍԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օծիսի, արկածի, ցւան թռչակի նիւղեր

VICTORI ԵՒ ԲԵՆԵԴԻԿՏԻ ՊԵՐԼԵՆ ԿԵՄՔԻ ՄԱՍԻՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԹԷ՛

DE

BERLIN

Առաջ քակական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւնն երուն վճարումները շարժական մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 190 ինչ ֆւ. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին

451,284,214

Հասցեսն ում 1853 թվաթ. 20-ին առ. ԸԵԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Բայան սն հրովարտակով եւ ուղղակի Օսմ Կայս Պանքա

Կառավարության հսկողության ներ- ԵՆ ՔՐԷՄԻ ԿՈՆԵ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ

ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ

## Skunks

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ԳԵԶԵՃԵԱՆ

Պոլիս Բաթրենթոլլու խան

PHL 45 GL 45 b

3-10

## ԳՈՐԾԱՐԱՆ

Գործի մանրութեան եւ նորոգութեան  
(Գրասենեակ՝ Մեծմաս — փառ, Թարգմար-  
լար, Մեծ Նոր Խանի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը  
սաքրուին աղաքած եւ փայտ թէ՛ մետաք-  
սէ եւ թէ՛ բարդէ ամէն տեսակ ընտիր գոր-  
գեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց  
որ եւ է արտա կամ հետք ձգելու, Բեր-  
հակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը  
կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած  
գորգերը:

Ունի նաեւ առուելութիւն մը նոր գոր-  
գերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին  
մէջ մաքրուած գորգերը դերձ կը մնան օե-  
րերու (կիւլէ) կեր ըլլալէ:

Կը նորագոյն նաեւ օրեւէ կերպով վնաս  
ուած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ  
պարտաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ  
ու ճաշկով որ ուզուի:

Յանձնարարութիւնք պէտք է ուղարկն  
գրասենեակը:

Դիւրամատչելի պայմաններ, 3—10

## ՏՈՔԹ. ՔԻՐԻԱԲՈՒ

Dr. Kiriakou Bander mali

Ջիդեու, լեւորիի եւ սսամոսի հիւանդու-  
թեանց մասնագէտ

Բարիզի հիւանդանոցներուն մէջ գործնա-  
կան փորձեր կատարելով վերագրեալ հիւան-  
դութեանց համար մասնագիտութիւն ձեռք  
բերած է: Իրեն դիմողները կը դարձնէ ամէն  
օր ժամ 7էն 10 Բերա Աղա Համաձեւելեա-  
կան հիւանդանոցներին դէմ, Թիւ 5 տունը,  
իսկ առտունները մինչեւ կէսօր Պօլիս կամաւ-  
րին գլուխը Բօսթօքի Արսէնաքի Թիւ 71  
դեղարանը: Ինչ առանի մէջ կը դարձնէ  
լիային ակարութիւններ, լուսնաութիւն,  
անդամաւորութիւն, գլխու ցաւ, օրտի բա-  
բախւմ, անքնութիւն, ամիսդիտեան  
ախտ, յոդացաւ, ստամոքսի հիւանդութիւն-  
ներ, դժուարամարսութիւն, արգանդի հի-  
ւանդութիւն եւ այլն: Դարձմամբ համար  
ներարկումով ելեկարականութիւն կը գոր-  
ծածէ: Ելեկարական դարձնի համար մաս-  
նաւոր սրահ մը կայ:

3—10

## ԱՂԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՍՈՒՍՏՈՒՆ

Ամեն տեսակ քօհաֆիլի ապրանապ

Մեծ—Շուկայ, Բիւրքինեբու դրան կից, Թ. 41—43

Նոյնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր  
հովանոցներու վաճառատուն, Պլիս, Սալ-  
թան—Համաձ, Միտիլի Դրամատան դէ-  
մ, Թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ  
գտնուած ապրանքները, թէ՛ Թօհաֆիլի  
վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յա-  
տուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան  
կը միջնեն տակաւնութիւն, եւ դիւրամա-  
տելի գիններու առուելութիւնն ալ կ'ընծայեն  
հասարակութեան:

Աղա՛մ Վարդեան մեծապէս գոհ  
Թողուցած է իր բազմաթիւ յաճախողները,  
կ'որժէ որ Շուկայ ելլող ամէն ընտանիք  
այցելէ անգամ մը այս երկու վաճառատուն  
ները եղանակին պէտքերը հագալու համար:

3—10

## ԱՍՍՄՆԱԲՈՅԺ

## Գ. ԳԱՔՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱՍ ՄԵԾ ՓՈԳՈՑ ԹԻՎ 200

Կալաթա-Սեղայի Լիսին դ'մ

Թե. Եթ. Եթ. օրերը առաւօտեան կանու-

լիսին մինչեւ իրիկուան ժ. 11½

Բե. Դե. Ուր. օրերը 6էն մինչեւ 11½

Կիրակի օրերը ժամադրութեամբ 3—10

## ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տոքթ. Բ. Էմիրզէ, որ իր բժշկական գիտելիքներով և բարիքի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն տեսած է, այժմ հաստատուած է, Բերա Պէոյիւք Բարմաք Դարաւ, Թիւ 16: Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ առանց մէջ առաջ զայն մեթոտներով կը բուժէ ջղային եւ հագեկան ամէն կարգի հիւանդութիւններ, ինչպէս նաեւ արդանդախցումէ (hystérie) առաջ եկած հիւանդութիւնները, մասնաւորապէս անդամաբաւութիւն եւ կարկամութիւն եւ այլն: Ասկէ զատ, սովորի եւ սովորական (սուր) (օրթոճա), առանց գործադրութեան՝ նոր դրութեամբ մը կը դարձնէ, աեղը առանց յայտնի ընելու: Տոքթ. Էմիրզէ Վ.Ֆ. կը գտնուի, Բերա Պէոյիւք Բարմաք Դարաւ, Թիւ 16 տան մէջ, ուր կիրակիէն զատ ամէն օր կէսօրէն յետոյ ժամը 1էն մինչեւ 4 (Ը. Ե.) հիւանդ կ'ընդունի, եւ ուրաթ օրերն ալ ձրիաբար ըկ դարձնէ հիւանդները:

4-10

## ՏՕՔԹ. ԲՈՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պօլսոյ, Կայս. Բժշկական վարժարանին, ահա՛մ Բարիքի Բժշկական համաժողովին: Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական գործարաններու հիւանդութեանց: Պատուով կայազիր ունի Պէրլինի, Լանտնի, Բեշթալի եւ այլ երկրներու Ակադ. միւնիսթերն: Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղի. գործերու:

Հիւանդ կ'ընդունի՝ Պօլսոյ կողմը կամուրջին դէմի անկիւնը, իր դարմասառան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն: Իսկ Բերա. Թաքսիմ, Փրանսա. կան հիւանդանոցին դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.)

4-10

## ՆՈՐ ԲԱՌԱՓԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Պատկերազարդ. 1000 Է աւելի եղերէ

բաղկացած

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

Նախնեաց բռներու նորաբնութիւններ, — գաւառական բռներ հանրապետական հատուածներ, երկրագործութեան, գիտութեանց, դիցարանութեան, առողջաբանութեան, օրինագիտութեան, ճարտարութեան:

Գործնական կենաց վրայ:

Հայերէն լեզուի բառական ճոխ եւ դիւրաւ բառագրքի մը պէտքը ընդհանուր եղած էր ցարդ: Ահա այդ պէտքը լրացնելու կոչուած է սոյն գործն, օգտուելով հայ եւ օտար բաղմաթիւ բառագրքերէ: Խնամքով հետազոտուած են բռներու ճշգրիտ նշանակութիւններն, առանց որոշ եւ ամփոփ սահմաններն, իրենց հականիշներով ու համանիշներով, հին ու նոր պէսպէս առում. ներով: Զանց չէ առնուած նաեւ դնել բռներու ծագումն, կենդանեաց, բուսեաց ար

4-10

դասակարգութեան վերաբերիլ, ի հարկին առնոց թուրքերէն ու ֆռանսերէնն եւ:

Բացի բուն բառագրքէն՝ գործոյ մարդը ընթացքին մէջ հանրագիտական հատուածներ կարելար տեղեկութիւն կուտան երկրագործութեան, գիտութեանց, դիցարանութեան, առողջաբանութեան, օրէնսդիտութեան, ճարտարութեան, գործնական կենաց վրայ:

Հրատարակուած են առաջին երեք թերթերն եւ միւսներն ալ յաջորդաբար կանոնաւորապէս լոյս պիտի տեսնեն: Թուրք ազնիւ եւ տպագրութիւն ընտիր եւ խնամեալ, զարդարուած յապկապէս փրագրուած սիրուն եւ ճաշակաւոր պատկերներով: Բացուած է բաժանորդագրութիւն հանրաւրն քաղաքներէն արժանի օտյն գերազանցապէս օգտակար գործոյն համար, 20 դր. հեկան, Պօլսոյ, 25 դր. առանց թղթատարի ծախուց համար եւ 6 ֆրանք օտար երկրներու համար:

Հեղինակին հասցէն՝

Կ. Պօլիս, Հաճօքուլո խան, Թիւ 24

01-6